ՍԵՆԱՏԻ ՕՐԻՆԱԳԻԾ 43 (SB 43) ԵՎ LPS ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

LOS ANGELES COUNTY DEPARTMENT OF MENTAL HEALTH
hope. recovery. wellbeing.

COUNTY OF LOS ANGELES Public Health
Substance Abuse Prevention and Control

Ի՞նչ է LPS խնամակալությունը:

Lanterman-Petris-Short-ի օրենքի (LPS) համաձաին խնամակալության մասին գործող օրենքն աջակցում է այն անհատին, ով ի վիճակի չէ բավարարել իր հիմնական կարիքները կամ ընդունել կամավոր բուժում իր լուրջ հոգեկան առողջության հիվանդության պատճառով:

LPS-ի համաձայն, **խնամակալը** նշանակվում է դատարանի միջոցով՝ խնամք ստացող անձի խնամքը սահմանափակ ժամանակահատվածում վերահսկելու համար՝ հետևյալ նպատակներով.

- Լիազորել և հաստատել հոգեբուժական նշանակումը և բուժումը
- Աշխատել բժշկական և հոգեկան առողջության մասնագետների հետ
- Համակարգել վերականգնմանը և բարեկեցությանը նպաստող աջակցող ծառայությունները

LPS-ը նաև կարգավորում է **հարկադիր հոգեբուժական պահումների** գործընթացը, որը հաճախ անվանում են 5150 պահում մեծահասակների համար և 5585 պահում 18 տարեկանից փոքր անչափահասների համար:

Ինչպե՞ս է SB 43-ը փոխում LPS խնամակալությունը:

Սենատի օրինագիծ 43-ը (SB43) դարձել է օրենք նահանգապետի ստորագրությամբ 2023 թ. հոկտեմբերին և ավելի քան 50 տարվա ընթացքում առաջին անգամ թարմացնում է Կալիֆորնիայի LPS խնամակալության օրենքները:

2024 թ. հունվարի 1-ից սկսած, SB 43-ը «ծանր հաշմանդամության» սահմանումը Կալիֆորնիայի նահանգում ընդլայնում է երկու եղանակով՝

1. Ավելացնում է թմրանյութերի օգտագործման ծանր խանգարումը որպես պատճառ, որի համար անձը կարող է հարկադիր պահման ենթարկվել:
2. Ավելացնում է անձնական անվտանգության կամ անհրաժեշտ բժշկական օգնություն ցուցաբերելու անկարողությունը որպես պատճառ, որի համար անձը կարող է հարկադիր պահման ենթարկվել, եթե անկարողությունը պայմանավորված է նրա հոգեկան առողջությամբ կամ թմրամոլության խանգարմամբ:

«Ծանր հաշմանդամություն» տերմինի սահմանումը.

- <u>Սահմանումը նախքան 2024թ. հունվարի 1-ը.</u>
  - Վիճակ, երբ անձը, հոգեկան առողջության խանգարման հետևանքով, անկարող է ապահովել իր հիմնական անձնական կարիքները՝ սնունդ, հագուստ կամ կացարան:
- <u>Նոր սահմանումը SB 43-ի համաձայն.</u>
  - Վիճակ, որի դեպքում անձը, հոգեկան առողջության խանգարման, *ծանր թմրամոլության խանգարման կամ միասին՝ հոգեկան առողջության խանգարման և ծանր թմրամոլության խանգարման* հետևանքով, անկարող է ապահովել իր հիմնական անձնական կարիքները՝ սնունդ, հագուստ, կացարան, անձնական անվտանգություն կամ անհրաժեշտ բժշկական օգնություն:

Նշում. նոր սահմանումը վերաբերում է միայն մեծահասակներին:

Լոս Անջելես վարչաշրջանում SB 43-ի փոփոխությունների մեծ մասը ուժի մեջ կմտնեն 2026թ. հունվարի 1-ից:

Ի՞նչ չի փոխվի SB 43-ի ներքո:

- 5150/5585 համար ուղեգրված անձը պետք է համապատասխանի «ծանր հաշմանդամության» չափանիշներին:
- Խնամակալությունը և 5150/5585 ընթացակարգերը թույլ են տալիս անհատներին պահպանել իրենց սեփական բժշկական որոշումները կայացնելու իրավասությունը
- Անձի բժշկական օգնությունից հրաժարվելու կարողությունը կախված է նրա համաձայնություն տալու կարողությունից: Համաձայնություն տալու անկարողությունը կարող է պահանջել դատարանի միջամտություն:

Լրացուցիչ տեղեկություններ LPS խնամակալության վերաբերյալ

- Խնամակալը կարող է լինել խնամք ստացող անձի կողմից ընտրված անձ կամ դատարանի կողմից նշանակված անձ:
- Լոս Անջելես վարչաշրջանը նպատակ ունի օգնել անհատներին հնարավորինս քիչ սահմանափակող պայմաններում և շարունակում է հանձնառու մնալ մարդկանց կամավորական ծառայություններին կապելուն՝ նախևառաջ ներգրավվածության և միջամտությունների միջոցով, ինչպիսիք են՝ Լիարժեք սպասարկման գործընկերություններ (FSP), Աջակցվող ամբուլատոր բուժում (AOT) կամ Համայնքային աջակցություն, վերականգնում և հզորացում (CARE Act) ծրագիր:
- Լոս Անջելես վարչաշրջանի Հոգեկան առողջության վարչության (LACDMH) Անօթևանների օգնության շարժական ներգրավման (HOME) թիմի կողմից ներկայացվում են LPS խնամակալության ուղեգրեր՝ որակավորված բժշկական մասնագետների կողմից, որոնք աշխատում են նշանակված հիվանդանոցներում/հաստատություններում:
- Հանրային խնամակալի գրասենյակը (OPG), որպես վարչաշրջանի խնամակալության քննիչ, ստանում է ուղեգիրը:
- Եթե OPG-ն որոշի, որ ուղեգրումը համապատասխանում է չափանիշներին, OPG-ն կդիմի ժամանակավոր խնամակալության համար և կուսումնասիրի, թե արդյոք անհրաժեշտ է մշտական խնամակալություն, կամ կան խնամակալության համապատասխան այլընտրանքներ:

Ինչպե՞ս կարող եմ ավելին իմանալ կամ օգնություն ստանալ:

SB 43-ի, **LACDMH-ի Հանրային խնամակալի գրասենյակի, CARE ծրագրի** և **Աջակցվող ամբուլատոր բուժման (AOT)** մասին ավելին իմանալու համար այցելեք LACDMH-ի կայքը՝ dmh.lacounty.gov հասցեով:

SB 43-ի գործադիր ղեկավարող կոմիտե

Համագործակցությունն ու արդյունավետ իրականացումն ապահովելու համար Լոս Անջելես վարչաշրջանը հրավիրել է Գործադիր ղեկավարող կոմիտե, որը կազմված է Հոգեկան առողջության և Հանրային առողջապահության վարչություններից, ինչպես նաև բազմաթիվ շահագրգիռ կողմերից:

SB 43-ին առնչվող հարցերի կամ դրանց վերաբերյալ պրեզենտացիա խնդրելու համար խնդրում ենք գրել հետևյալ էլ. փոստի հասցեին՝ SB43@dmh.lacounty.gov:

Թմրանյութերի օգտագործման խանգարման ծառայություններ

Թմրանյութերի օգտագործման խանգարումը (SUD) ազդում է անհատների և համայնքների վրա ամբողջ երկրում, ընդ որում՝ 12 տարեկան և բարձր ավելի քան 48 միլիոն ամերիկացիներ տառապում են SUD-ից: Դուք կարող եք ավելի շատ տեղեկություններ գտնել SUD ծառայությունների մասին՝ այցելելով Թմրանյութերի չարաշահման կանխարգելման և վերահսկման հանրային առողջապահության բյուրոյի կայքը՝ ph.lacounty.gov/sapc/:

Կոնտակտներ և ռեսուրսներ

Եթե դուք կամ ձեր ծանոթներից մեկը պայքարում է հոգեկան առողջության կամ թմրամոլության

խանգարման դեմ, զանգահարեք Լոս Անջելես վարչաշրջանի Հոգեկան առողջության և թմրամոլության օգնության գծին՝ 1-800-854-7771 հեռախոսահամարով, որը հասանելի է 24/7 ռեժիմով:

Լոս Անջելես վարչաշրջանի Հոգեկան առողջության վարչություն

- Օժանդակ ամբուլատոր բուժում (AOT-LA)՝ dmh.lacounty.gov/our-services/countywide-services/aotla/
- CARE դատարանի ծրագիր՝ dmh.lacounty.gov/court-programs/care-court/
- Հանրային խնամակալի գրասենյակ՝ dmh.lacounty.gov/our-services/public-guardian/

Լոս Անջելես վարչաշրջանի Հանրային առողջության վարչություն - Թմրամոլության կանխարգելու և վերահսկում.

- RecoverLA.org: Բջջային հեռախոսների համար նախատեսված թմարնյութերի օգտագործման ռեսուրսների ուղեցույցի համար:
- Ծառայության և կացարանի հասանելիության գործիք (SBAT): Ձեր մոտակայքում առկա SUD բուժման մատակարարների մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք SUDHelpLA.org

**SB 43-ին վերաբերող տերմինների բառարանի և հնարավոր ցուցանիշների ու ախտանիշների ցանկը դիտելու համար այցելեք LACDMH-ի կայք՝ dmh.lacounty.gov/sb43 կամ սկանավորեք այս QR կոդը*